# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
## ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-070-26.03.2019, 27.05.2019-ՄԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. |
| 1 | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված | 1) Նախագծի 9-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել Օրենքի 38-րդ հոդվածում:<br>Առաջարկում ենք նույնը թողնել գործող իրավակարգավորումը՝ լրացում կատարելով նոտարական գործունեության մասով:<br>Այսինքն, առաջարկում ենք Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ, «անցել է հանրային ծառայության՝ պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով կամ նշանակվել է նոտար՝ նոտարական գործունեության ողջ ժամկետի ընթացքում, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով.»: | Նկատի ունենալով, որ նախագծով առաջարկվող ձևակերպումը առավել ընդգրկուն է և 5 տարի ժամկետով արտոնագրի կասեցման կարգավորումը հանվել է Իմ քայլը խմբակցության առաջարկով՝ սույն առաջարկը ընդունելի չէ: | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 2. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված | 2)Նույն 9-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է նախատեսել, որ օրենքով նախատեսված որոշակի աշխատանքների անցնելու պարագայում մեկամսյա ժամկետում փաստաբանների պալատի խորհրդին այդ մասին տեղեկատվություն չտրամադրելու դեպքում փաստաբանի նկատմամբ նշանակվում է կարգապահական տույժ: Ընդ որում, պարզ չէ, թե որ տեսակի տույժի մասին է խոսքը, ինչը կարող է լայն հայեցողության տեղիք տալ:<br>Ըստ այդմ, առաջարկում ենք Օրենքի 39.9-րդ հոդվածը լրացնել նոր տուժի տեսակով' փաստաբանի արտոնագրի գործողության պարտադրված կասեցում և սահմանել, որ այն կիրառվում է բացառապես այս տեսակի խախտման պարագայում' նկատողություն հայտարարվելուց հետո արտոնագրի գործողությունը | Առաջարկի ընդունման դեպքում խախտվում է օրենքով նախատեսված տույժերի համակարգի ողջ տրամաբանությունը, այն հաշվով, որ յուրաքանչյուր խախտման համար չնախատեսվի կոնկրետ տույժի տեսակ, այլ հաշվի առնելով կոնկրետ դեպքով բոլոր փաստական հանգամանքները՝ փաստաբանների պալատի խորհուրդը հնարավորություն ունենա կիրառելու օրենքով նախատեսված տույժի միջոցներից մեկը: Այս հիմնավորմամբ առաջարկն ընդունելի չէ: | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երկշաբաթյա ժամկետում կամովին չկասեցվելու դեպքում: | | |
| 3. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված | 3) Նույն հոդվածի 3-րդ կետով առաջարկվում է Օրենքի 38-րդ հոդվածի 6- րդ մասով սահմանել, որ արտոնագիրը կասեցված պալատի անդամը ոչ միայն իրավունք չունի մասնակցելու պալատի մարմինների և նախագահի ընտրություններին, այլ նաև իրավունք չունի առհասարակ մասնակցելու փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, ընտրելու և ընտրվելու պալատի մարմիններում և պալատի նախագահ: Ընդ որում, այս դրույթը նախատեսվում է ընդունել կասեցված արտոնագրով փաստաբանների համար 50% անդամավճարների սահմանման հետ մեկտեղ, ինչի տրամաբանությունը բոլորովին հասկանալի չէ (6-րդ կետ): **Այսինքն՝ մի կողմից ավելացվում է** | Առաջարկը չի ընդունվել: Նախագծից հանվել է արտոնագրի գործողության կասեցման առավելագույն 5 տարի ժամկետի դրույթը: Բացի այդ փաստաբանին տրվում է արտոնագրի ժամկետը անորոշ ժամանակահատվածով կասեցնելու հնարավորություն առանց անդամավճարի կամ դրա 50 տոկոսի վճարման պարտականության: | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **պարտականություն, մյուս կողմից կրճատվում են իրավունքներ:**<br>Կարծում ենք՝ հիմնավորման չի ենթարկվում, թե ինչու պետք է կասեցված արտոնագիր ունեցող փաստաբանը վճարի անդամավճար, եթե նա կասեցված արտոնագրով չի կարող փաստաբանական գործունեություն ծավալել և դրանով ստանալ եկամուտ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք դրույթը հանել Նախագծից:<br>Ավելին, առհասարակ որևէ պարտավորության սահմանումը ենթադրում է դրան համապատասխան իրավունքների նախատեսում, այլ ոչ թե հակառակը: Հետևաբար, առաջարկում ենք քննարկվող հոդվածով սահմանել, որ կասեցված արտոնագիր ունեցող բոլոր փաստաբանները՝ անկախ նրանից, թե կասեցումն ինչ ժամկետով է կատարվել, իրավունք ունեն՝<br>մասնակցելու փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, մասնակցելու պալատի մարմինների և պալատի նախագահի ընտրություններին՝ առանց | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ընտրվելու իրավունքի: | | |
| 4. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված | 4) Նույն հոդվածի 4-րդ կետով առաջարկվում է սահմանել, որ արտոնագրի գործողությունը կասեցնելու հիմքերը վերանալուց մեկամսյա ժամկետում այն վերականգնելու մասին դիմում չներկայացվելու դեպքում կետանցված ժամանակահատվածի համար փաստաբանի նկատմամբ վերահաշվարկվում է անդամավճարը՝ կրկնապատկված չափով: Պարզ չէ, թե ինչ հիմնավորում է դրվել փաստացի նման բարձր տուժանք սահմանելու հիմքում:<br>Առաջարկում ենք զերծ մնալ տուժանքներից, սահմանելով միայն կետանցված ժամանակահատվածի համար չվճարված անդամավճարի վճարման պարտավորություն: | Առաջարկը չի ընդունվել: Նպատակը արտոնագրի գործողության կասեցման հիմքի վերանալուց հետո փաստաբանի պատշաճ վարքագծի ապահովումն է: | **Չի ընդունվել** |
| 5. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության | 5)Նախագծի 12-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ կատարել Օրենքի 43-րդ հոդվածում, | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված | որոնց թվում առաջարկվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թեկնածուի 10 տարվա փաստաբանական ստաժն իջեցնել 5 տարվա: Մեր համոզմամբ՝ նման փոփոխությունը բացարձակապես անընդունելի է, քանի որ հանրային պաշտպանի գրասենյակն այն կառույցը չէ, որի ղեկավարի թեկնածուի համար սահմանված պահանջների նշագիծը կարող է իջեցվել: Օրենքով այս պահին սահմանվում է ընդամենը մեկ՝ 10 տարվա մասնագիտական ստաժի պահանջ, և խիստ կասկածելի է, որ 5 տարվա ստաժ ունեցող փաստաբանը կարող է արդյունավետ ղեկավարել հանրային պաշտպանություն իրականացնող միակ կառույցը:<br>Հատկանշական է նաև, որ այս փոփոխության առաջարկը որևէ կերպ չի հիմնավորվել Նախագծի հեղինակների կողմից: | | |
| **6.** | **«Լուսավոր** | «Փաստաբանությ | 6)Նույն հոդվածով առաջարկվում է | **Կատարվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Հայաստան» խմբակցություն** | ան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված | սահմանել հետևյալը.<br>«Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է դիմել՝<br>- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսվարող սուբյեկտներին անվճարունակ անձանց անվճարունակության փաստն ստուգելու, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար:<br>Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են հնգօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ պահանջվող փաստաթղթերը օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում»:<br>Առաջարկում ենք երկրորդ նախադասության մեջ ևս նախատեսել | **համապատասխան փոփոխություն** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տնտեսվարող սուբյեկտներին՝ կատարելով համապատասխան լրացում: | | |
| 7. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված | 7)Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է փաստաբանների պալատի խորհրդի նիստերին: Մինչդեռ, Նախագծի 12-րդ հոդվածով փաստորեն դրույթն ուժը կորցնում է՝ առանց որևէ կերպ հիմնավորվելու:<br>Առաջարկում ենք պահպանել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի այս լիազորությունը, քանի որ վերջինիս մասնակցությունը փաստաբանների պալատի խորհրդի նիստին կարող է մեծ կարևորություն ունենալ: | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |
| 8. | **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության | 8)Նույն հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է Օրենքում կատարել հետևյալ լրացումը՝ փաստաբանների | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 43-րդ հոդված | պալատը, պարզելով, որ հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրել վճարունակ անձին, վեցամսյա ժամկետում կարող է դատական կարգով (...) պահանջել հօգուտ պետական բյուջեի բռնագանձել փաստաբանի իրավաբանական օգնության հետ կապված ողջամիտ վճարը (...):<br>Առաջարկում ենք «կարող է դատական կարգով պահանջել» բառերը փոխարինել «դատական կարգով պահանջում է» բառերով, քանի որ «կարող է» եզրույթը ենթադրում է հայեցողական լիազորություն, այսինքն՝ համապատասխան մարմինը կարող է օգտվել օրենքով իրեն վերապահված տվյալ լիազորությունից, կարող է և չօգտվել: Մինչդեռ, կարծում ենք, որ եթե վճարունակ անձը որևէ եղանակով կարողացել է օգտվել պետական բյուջեի՝ հարկատուների միջոցների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հաշվին տրամադրվող հանրային պաշտպանությունից, ապա նրանից խնդրո առարկա գումարը պետք է միանշանակ գանձման ենթակա լինի:<br>առաջարկությունը բխում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքից: | | |
| 9. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված | 1) Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 4-րդ կետի «բայց որ ավելի, քան 5 տարի ժամկետով» բառերը հանել:<br><br>2) Օրենքի 38-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասից «4-րդ» բառը հանել: | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |
| 10. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու | Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասը առաջարկվել է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումները 30-օրյա ժամկետում կարող են բողոքարկվել | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված | փաստաբանների պալատի նախագահին կամ դատարան: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումների վերաբերյալ փաստաբանների պալատի նախագահի որոշումները 30-օրյա ժամկետում կարող են բողոքարկվել դատական կարգով: | | |
| 11. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 45-րդ հոդված | Օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասում «6-ամսյա» բառը փոխարինել «Հանրային պաշտպան նշանակվելուց հետո 4-ամսյա» բառերով: | **Կատարվել է համապատասխան փոփոխություն** | **Ընդունվել է** |
| 12. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու | Օրենքի 41-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասի 2-րդ կետը հանել: | Առաջարկը չի ընդունվել: Խնդրո առարկա կարգավորումը սույն նախագծի կարևորագույն փոփոխություններից է և միտված է քաղաքացիների իրավաբանական | **Չի ընդունվել** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված | | օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելուն: | |
| 13. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված | Օրենքի 41-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասը հանել: | Առաջարկն ընդունելի չէ: Իրավաբանական օգնության տրամադրման կարգը բազմաթիվ հարցերի հետ կապված լուծումներ պետք է սահմանի: Հետևաբար, այդ կարգի բացակայությունը գործնականում մի շարք խնդիրներ կառաջացնի: | **Չի ընդունվել** |
| 14. | **«Իմ քայլը» խմբակցություն** | «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդված | Օրենքի 45-րդ հոդվածում լրացվող 9-րդ մասը հանել | Առաջարկը չի ընդունվել: Ներմուծվող կարգավորումը կարևոր երաշխիք է հանրային պաշտպանի գրասենյակի պատշաճ գործունեությունն ապահովելու համար: | **Չի ընդունվել** |